ԷԼԼԱ ԱՍԱՏՐՅԱՆ
ԵՐՊԼՀ

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՈՆ ԴԵԼԻԼԼՈՅԻ «ՄԱՈ ԵՐԿՐՈՐԴ» ՎԵՊՈՒՄ*

Ամերիկացի ժամանակակից գրող Դոն ԴեԼիլլոյի ստեղծագործությունների վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ կան, այդ թվում՝ վիպական քրոնոտոպի շուրջ, որոնք, սակայն, մեզ թվում են մասնակի: Ուստի սույն ուսումնասիրությունն ուղղված կլինի մասնավորապես «Սաո երկրորդ» վեպի տարածության պատկերման առանձնահատկությունների վերհանմանը, ինչը թույլ կտա քննել ստեղծագործության մեջ արծարծված մի շարք խնդիրներ:

Դոն ԴեԼիլլոյի «Սաո երկրորդ» վեպն ընթերցողին հնարավորություն է ընձեռում ուշադրությունը սևեռել այնպիսի խնդիրների և թեմաների վրա, որոնք արդիական են անգամ այսօր, թեպետ գրքի լույս տեսնելուց անցել է մոտավորապես երկու տասնամյակ: 1970-ական թվականներից ստեղծագործող Դոն ԴեԼիլլոն իր ձեռագիրն ու ուրույն տեղն ունի ժամանակակից ամերիկյան գրականության մեջ՝ պարբերաբար անդրադառնալով այնպիսի թեմաների, որոնք են՝ նորագույն տեխնոլոգիաների կայծակնային զարգացումը և ներխուժումը անհատի կյանք, ահաբեկչությունը, անհատականության և ամբոխի խնդիրը, արվեստագետի դերն ու նշանակությունը զարգացող հասարակությունում, և այլն: ԴեԼիլլոյին հետաքրքրում է այն հարցը, թե որքանով է անհատը կարողանում պահպանել իր ես-ը մի աշխարհում, որը ստեղծված է տեղեկատվական տեխնոլոգիաների և զանգվածային լրատվական միջոցների մատուցած տեղեկության հիման վրա: Հեղինակը նաև համեմատականներ է անցկացնում արվեստ և ահաբեկչություն հասկացությունների միջև, որոնց համատեքստում ներկայացնում է աշխարհի պատկերը՝ շեշտելով գլոբալիզացիայի հետևանքները, աշխարհի վերակառուցումը, հին/նոր աշխարհների/քաղաքակրթությունների բախումը՝ այդպիսով իսկ ուրվագծելով աշխարհի նոր մոդել:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 11.02.2019:

ԴեԼիլլոն իր հարցազրույցներից մեկում նշում է, որ «Մաո Երկրորդ» վեպը գրելու գաղափարը ծնվել է երկու լուսանկարից, որոնք նա տեսել է թերթում[1]: Լուսանկարներից մեկը ներկայացնում է Կորեայում տեղի ունեցած զանգվածային ամուսնության տեսարան, որով և սկսվում է «Մաո Երկրորդ» վեպը, իսկ մյուս լուսանկարը՝ ամերիկացի գրող Դ.Ջ. Սելինջերի նկարն էր, ում լրագրողները վերջապես կարողանում են լուսանկարել. վերջինս թաքնվում և խուսափում էր արտաքին աշխարհից: Եվ հենց արտաքին աշխարհից խուսափող արվեստագետի կերպարն էլ կդառնա վեպի գլխավոր հերոսը՝ Բիլ Գրեյը, որին մանրամասն ավելի ուշ կանդրադառնանք մեր հոդվածում:

Դոն ԴեԼիլլոյի «Մաո Երկրորդ» վեպի ուսումնասիրությունը թույլ է տալիս տարածական մի քանի հարթություն առանձնացնել, որոնց ամբողջությամբ էլ կառուցվում է ստեղծագործությունը: Վեպի սյուժեն զարգանում է հետևյալ տարածական միավորներում.

բեյսբոլ խաղի մարզադաշտ

առանձնատուն ամայի վայրում

քաղաքային բաժանում՝ Նյու Յորք, Լոնդոն, Աթենք, Բեյրութ

մայրցամաքների բաժանում՝ Ամերիկա, Եվրոպա, Ասիա

արևելք–արևմուտք՝ քաղաքակրթությունների բախում

Վեպը սկսվում է բազմահազարավոր զույգերի ամուսնական արարողությամբ, որը տեղի է ունենում Ցանքի անունը կրող բեյսբոլի մարզադաշտում: Այստեղ հավաքված են Մունական կրոնական ուղղության հետևորդները և նրանց առաջնորդն, ով իրականացնում է ամուսնության արարողությունը: «Ցանքի» մարզադաշտում ներկա են տարբեր ազգության ներկայացուցիչներ, և սա հենց առաջին ահազանգն է առ այն, որ Միացյալ Նահանգների խորհրդանիշ հանդիսացող բեյսբոլը, հետևաբար և մարզադաշտն այլևս զուտ ամերիկյան արժեքներ չեն. այստեղ տեսանելի է այլ քաղաքակրթությունների կողմից նահանգների նվաճումը: Այսպես կոչված «ամերիկանիզմ» երևույթը, կարծես թե, շրջվել է հենց Ամերիկայի դեմ՝ վերջինիս դարձնելով իր իսկ զոհը: Այս բազմահազարանոց ամուսնության տեսարանում, իհարկե մեկ այլ առավել կարևոր հարց է բարձրացնում հեղինակը՝ ցույց տալով ամբոխի, որ ինքնամոռաց լսում և ենթարկվում է իր

1 Passaro V. Dangerous Don DeLillo. /http://www.nytimes.com/books/97/03/16/lifetimes/del-v-dangerous.html/access date 05.04.2010.

առաջնորդին: Նրանք բոլորը նույնանման են մտածում, նույն կերպ են խոսում, նույն հավատալիքն ու կյանքի իմաստն ունեն.

«Նրանք նոր ազգ են,-մտածում է նա, որի հիմնաքարը դյուրահավատությունն է: Նրանք գործիք են, որ աշխատում է վստահության շնորհիվ: Նրանք արտահայտվում են իրենց լեզվով՝ արդեն իսկ պատրաստ եզրույթներով և դատարկ արտահայտություններով»[2]:

Ինչպես ԴեԼիլլոն է գրում՝ ապագան պատկանում է ամբոխներին[3]: Տարածական տվյալ միավորի պատկերմամբ հեղինակը շեշտադրում է գլոբալիզացիայի ազդեցությունն ու տարածական սահմանների ոչնչացման փաստը:

Հեղինակի կողմից ընտրված հաջորդ տարածական միավորներին անդրադառնալուց առաջ, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել վեպի գլխավոր գործող անձին, ով տեղաշարժվելով մի տարածական միավորից մյուսը՝ կերտում է վեպը: Բիլ Գրեյը՝ վաթսուներեքամյա հանրաճանաչ գրող է, ով արդեն քսաներեք տարի է ապրում է մեծ առանձնատանը՝ հեռու Նյու Յորքից և քաղաքային մշակույթից: Գրեյի նման մոտեցումը պայմանավորված է այն փաստով, որ վերջինս չի կարողանում հարմարվել նորագույն տեխնոլոգիաների ու զանգվածային լրատվամիջոցների անհերքելի ազդեցությանը, որոնք և ստեղծում ու կառավարում են իրականությունը.

«Իսկ մեր աշխարհում մենք քնում ենք պատկերների հետ, աղոթում ենք նրանց, ուտում և մեր մեջ ենք տեղավորում նրանց»[4]:

Որպես լուծում Բիլ Գրեյն ընտրում է փախուստը, թեպետ վեպի գործողությունների զարգացմանը զուգընթաց մենք կտեսնենք, որ նա ի վերջո դուրս է գալիս իր թաքստոցից՝ փրկելու պատանդ վերցված երիտասարդ գրողին՝ դառնալով ահաբեկչական աշխարհի «խաղալիքը»: Այստեղ ԴեԼիլոն իր հերոսի միջոցով բարձրաձայնում է, որ ժամանակակից աշխարհը պատկանում է լրատվամիջոցներին ու ահաբեկիչներին, և եթե ժամանակին արվեստագետն էր ուղղորդում հասարակությանը, ապա այսօր դա անում են «հրացանով տղաները»[5]:

Ինչպես արդեն նշվեց, Բիլ Գրեյը մոտ 23 տարի բնակվում էր քաղաք տոպոսից հեռու գտնվող մի մեծ առանձնատանը: Ամայի վայրում

2 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 7.
3 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 1.
4 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 17.
5 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 38.

թաքնված այս առանձնատունը դառնում է վեպի տարածական միավորներից մեկը, որը հերոսին պաշտպանում է արտաքին աշխարհից: Արտաքին աշխարհը տվյալ դեպքում քաղաքն է ու տեխնոլոգիաները: Առանձնատան տոպոսը դառնում է քաղաքի տոպոսի հակադրություն, փախուստի և ապահովության խորհրդանիշ, որից այն կողմ գտնվող աշխարհում վտանգավոր է և կործանարար, քանի որ վերջինս լցված է տեղեկատվության և պատկերի պաշտամունքով:

Տարածական հաջորդ միավորը, որտեղ տեղի են ունենում վեպի գործողությունները, Նյու Յորքն է: Նշենք, որ իր գրեթե բոլոր վեպերում հեղինակն առաջին կամ երկրորդ պլանով անպայման տալիս է քաղաքի պատկերումը՝ նմանվելով Ջեյմս Ջոյսին, ով իր վեպերում կերտել է Դուբլին քաղաքի պատկերը, և ինչպես Ջոյսն էր ասում, անգամ եթե Դուբլինը կործանվի, իմ գրածներով հնարավոր կլինի վերականգնել այն[6]: Նույնը կարելի է ասել և ԴեԼիլլոյի Նյու Յորքի մասին:

ԴեԼիլլոն Նյու Յորքի շքեղությունը շեշտելուց և այն ապագայի քաղաք ներկայացնելուց[7] զատ, ցույց է տալիս, որ քաղաքը դարձել է արևելյան քաղաքակրթության կրողը, երբ ամեն քայլափոխի երևում են ճապոնական կամ չինական ծագում ունեցող ցուցանակներ ու գովազդներ: Ըստ սոցիոլոգներ Անտոնիո Նեգրիի և Մայքլ Հարդթի՝ «Աշխարհների տարածական բաժանումը առաջին, երկրորդ, երրորդի այնքան է խառնվել, որ մենք պարբերաբար կարող ենք Առաջին աշխարհը տեսնել Երրորդում, Երրորդն՝ Առաջինում, իսկ Երկրորդի մասին ընդհանրապես մոռանանք»[8]: Սրան զուգահեռ ընթերցողն ականատես է այն փաստին, որ քաղաքում շատ են անօթևանները, որոնց թվում գերակշռում են ազգությամբ արաբները: Տեքստում շատ հաճախ ընթերցողը հանդիպում է հենց ամերիկացիների կողմից հնչող հետևյալ արտահայտությանը՝ կարծես Բեյրութում լինենք[9]:

«Մաո Երկրորդ» վեպում կարելի է նկատել, թե ինչպես է Նյու Յորքը դառնում գլոբալիզացիայի/ամերիկանիզմի զոհը: Ամերիկան հենց ինքն է ընկնում իր թակարդը՝ իր վրա կրելով այլ աշխարհների կնիքը:

6 Rushe D. In the Footsteps on James Joyce Dublin. http://www.nytimes.com/1982/01/17/travel/in-the-footsteps-on-james-joyce-dublin.html?pagewanted=all/ access date 12.06.2012/

7 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 12

8 Negri A. Hardt M. Empire https://www.theguardian.com/world/2001/jul/15/globalisation.businessandmedia/access /access date 20.10.2016/

9 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p.

Տեղի է ունենում քաղաքակրթությունների միաձուլում: Ինչպես գրականագետ Փիթեր Նայթն է նշում իր «Մաո երկրորդ կամ Աշխարհի նոր դասակարգում» հոդվածում, «Նյու Յորքը, որ արևմտյան պոստմոդեռնիստական տեխնոլոգիապես հագեցած կապիտալիզմի գագաթնակետն է, ժամանակ առ ժամանակ նմանվում է երրորդ աշխարհի քաղաքի»[10]: Այստեղ առաջ է գալիս մենք/նրանք հայեցակարգը, երբ տեղի է ունենում արժեքների փոփոխություն և միաձուլում: Ձևավորվում է միջանկյալ նոր տարածություն, որը գլոբալիզացիայի հետևանք է: Տարածություն, որ չունի նյութական ձև, բայց ունի բովանդակություն:

Բեյրութ քաղաքի հետ անցկացվող համեմատականները պատահական չեն, որովհետև այս քաղաքը նույնպես շատ կարևոր դեր է զբաղեցնում վեպում: ԴեԼիլլոն քաղաքի դեմքը ներկայացնում է հետևյալ կերպ՝ որպես ավերածությունների, ահաբեկիչների ու ահաբեկչության կենտրոն, քաոտիկ մի աշխարհ, որտեղ ոչինչ չկա, բացի վախից ու սարսափից: Բեյրութի պատկերման համատեքստում հեղինակը հետևյալ դրվագն է առաջ քաշում. ահաբեկչական խմբավորումը պատանդ է վերցրել շվեյցարացի երիտասարդ գրողի և պատրաստ է բաց թողնել, եթե մեկ այլ հայտնի գրող հրապարակայնորեն որևէ քայլ ձեռնարկի: Այստեղ տեսնում ենք ժամանակի կարևորագույն «զենքերից»՝ զանգվածային լրատվամիջոցների ազդեցության փաստը, երբ լրատվամիջոցները կոտրում են տարածական և ժամանակային բոլոր սահմանները՝ փորձելով գրավել համաշխարհային հանրության ուշադրությունը:

Հաջորդ տարածական միավորը, որտեղ հայտնվում է վեպի հերոս Բիլ Գրեյը, Լոնդոնն է: Այստեղ Գրեյը մամլո ասուլիսի ժամանակ պետք է ընթերցի պատանդ վերցված գրողի բանաստեղծություններից, բայց ահաբեկչական գործողության պատճառով մամլո ասուլիս տեղի չի ունենում, փոխարենը Գրեյը ծանոթանում է այդ խմբավորման ներկայացուցչի հետ, ով հեղինակին հրավիրում է Աթենք՝ թեմայի շուրջ զրուցելու համար, որովհետև ինչպես նա է նշում՝ Լոնդոնում երկխոսությունն անհնար է[11]: Հիշեցնենք, որ Մեծ Բրիտանիան հանդիսացել է Եվրոպայի մեծագույն գաղութատիրական երկիրը, որի կենտրոնը Լոնդոնն է.

10 Knight P. Mao II and the New World Order. Don DeLillo. Mao II. Underworld. Falling Man. Ed. By S. Olster. Continuum. New York. 2011. p.40

11 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 65.

բոնության տարածությունում գրեթե անհնար է համերաշխություն կամ փոխզիջում հաստատել: Իսկ Աթենք քաղաքի ընտրությունը կարելի է դիտարկել որպես հին աշխարհի ամենավառ պատկերում: Մենք հակված ենք այն կարծիքին, որ ԴեԼիլլոն այսկերպ ակնարկում է այն, թե հին աշխարհն է, որ իրականն է ու անբեկանելի՝ ի տարբերություն նոր զարգացող աշխարհի, որ միայն բացասական միտումներ ունի: Այս բացասական մոտեցումն ու մտավախությունները կարմիր թելի նման անցնում են ԴեԼիլլոյի բոլոր վեպերով՝ բարձրաձայնելով, որ արագ զարգացող աշխարհն իրականում հանգեցնելու է հետընթացի:

Վեպի տարածական պատկերումը, քաղաքային բաշխման տեսանկյունից դիտարկելով, կարող ենք առանձնացնել Նյու Յորք, Լոնդոն ու Աթենք քաղաքները, որոնք հին և նոր աշխարհի դեմքն են և արտացոլում են նաև Եվրոպա և Ամերիկա մայրցամաքային բաժանումը: Մենք կարծում ենք, որ հեղինակն ընտրել է հենց այս քաղաքները՝ ընթերցողի ուշադրությունը սևեռելու ժամանակակից աշխարհի իրադրության և խնդիրների վրա: Այս պարագայում ԴեԼիլլոն գրականությունն օգտագործել է որպես միջոց՝ ի հակադրություն լրատվամիջոցների՝ ցույց տալու համար, որ Միացյալ Նահանգները, լինելով գերտերություն և զարգացման կենտրոն, իրականում տապալվում է, և հին աշխարհն է՝ ի դեմս Աթենքի և ավանդույթների, որ դեռ հնարավորություն ունի փրկության:

ԴեԼիլլոն «Մաո Երկրորդ» վեպում ավելի է ընդլայնում տարածական պատկերացումները՝ անդրադառնալով քաղաքակրթությունների փոխհարաբերություններին: Ամերիկացի հեղինակը տարածական միաձուլման փորձ է իրականացնում: Հեղինակը սա ներկայացնում է այն դրվագում, երբ վեպի հերոսներից մեկը՝ Սքոթը, քայլելով Մանհեթենով /Նյու Յորք/, բախվում է գովազդային ցուցանակների տարօրինակ, ասես թե նոր լեզվով գրված բառերի շարքի, որոնք իրականում ճապոնական ծագում ունեն.

«Իսկապես որ տարօրինակ է: Այս ինչի՞ է վերածվել Նյու Յորքը: Նա իր շուրջն էր նայում և թվում էր, թե ժամանակն ու տարածությունը վերանում են: Նայում էր նեոնային գրություններին՝ «Միտա», «Միդորի», «Կիրին», «Մագնո», «Սունթորի». բառեր, որ ասես ինչ-որ արհեստական զանգվածային լեզվից լինեին»[12]:

12 DeLillo D. Mao II. Peguin Books USA Inc. New York. 1992. p. 38

Իսկ հետագայում մենք կտեսնենք, որ նույն կերպ ամերիկյան արժեքներն են սողոսկում այլ տարածություններ, ինչպես օրինակ Բեյրութում հայտնվում են գովազդային պաստառներ Coke II անվանումով, որն իր մեջ ներառում է Մաո II և Կոկա Կոլա հասկացությունների ամբողջությունը: ԴեԼիլլոն այս կերպ անդրադառնում է գլոբալիզացիային, որը հաճախ ամերիկանացում հոմանիշով է փոխարինվում: Եվ աշխարհի տարբեր վայրերում ամերիկյան արժեքների տարածումը հենց գլոբալիզացիայի ապացույցն է, սակայն, ինչպես տեսնում ենք, ԱՄՆ-ում էլ այլ արժեքներ են հայտնվում, այսինքն՝ գլոբալիզացիան անդրադառնում է հենց իր՝ Միացյալ Նահանգների դեմ: Այսպիսով, հեղինակը ջարդում է տարածական, ժամանակային, ազգային բոլոր պատնեշները՝ դրանց մի ամբողջության որակավորում տալով:

Այսպիսով, ամերիկացի հեղինակ Դոն ԴեԼիլլոյի «Մաո երկրորդ» վեպի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել այն միտքը, որը վեպը կառուցված է մի քանի տարածական միավորների հերթակայությամբ: Յուրաքանչյուր տեղանքի ընտրությունը որոշակի հաղորդագրություն է ընթերցողին, որով հեղինակն ահազանգում է ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող խնդիրների և աշխարհի պատկերման մասին:

Բանալի բառեր. - ԴեԼիլլո, տարածություն, քաղաք, ահաբեկչություն, պոստմոդեռնիզմ, արվեստագետ, գլոբալիզացիա:

ЭЛЛА АСАТРЯН

ОСОБЕННОСТИ ОТОБРАЖЕНИЯ ПРОСТРАНСТВА В РОМАНЕ ДОН ДЕЛИЛЛО "МАО II"

Резюме

В статье представлен анализ нескольких проблем, которые отражены в романе американского писателя-постмодерниста Дона Делилло "Мао II" . Через главного героя романа автор передает реальную картину нового мирового порядка, где доминирует глобализация. Деллило отображает картины Нью-Йорка, Лондона, Афин, Бейрута и показывает, что в новом свете все ценности взаимосвязаны и в результате глобализации/ американизации существует одно общее пространство.

Ключевые слова: Делилло, космос, город, терроризм, постмодернизм, художник, глобализация

ELLA ASATRYAN

THE PECULIARITIES OF SPACE PICTURING IN THE NOVEL "MAO II" BY DON DELILLO

Summary

The article introduces the analysis of several problems reflected in the novel ''Mao II' by the American postmodern writer Don DeLillo. Through the main hero of the novel, the author gives the real image of the new world order, where globalization dominates. DeLillo reveals the images of New York, London, Athens, Beirut and shows that in the new world all the values are inter-connected and there is one general space as a result of globalization/ Americanism.

Keywords: DeLillo, space, city, terrorism, postmodernism, artist, globalization